յանցաւորները ողջ ողջ գնել և հիւսել տուաւ։

Իւրաքանչիւրին գլխուն դիմաց պատուհանի պէս ծակ մը շինուած էր, որպէս զի այս Թշուառներուն երեսին վրայ նշմարուին ցաւքն և անօթութեան պատճառած սոսկալի տանջանքները։ Դեռ գանկերու նշխարքներ և զգեստներու կտորներ գտայ հոն։ Այսպիսի տեսարաններու անվարժ ճանապարհորդը կը դողայ Մէօթամէտին տարօրինակ արդարասիրութեան չէնքին չորս դին դարձած ատեն։ Այն Ֆէրրաշը՝ որ Մէհմաւիճներուն աշտարակը կը ցուցնէր ինծի, ըսաւ որ անոնց գլխաւորներէն երկուք մին ալ մեռան ոչինչ նուազ բարբարոսաբար կերպով, բայց աւելի չուտով. մէկը Թնդանօթի մը բերանը դրուեր էր. միւսը երկու կտոր ճղքուեցաւ, և մարմնոյն երկու կտորներն ալ քաղքին դրանը վրայ կախուեցան, ուրիշներու օրինակ ըլլալու համար։

ԵՒԳ. ՖԼԱՆՏԷՆ։

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ւ Ն

(Տես երես 155)

ՏԵՍԱՐԱՆ Ե

ԲՐՈՒՏՈՍ, ԿԱՍՍԻՈՍ, ԿԻՄԲՐՈՍ, ԴԵԿԻՄՈՍ

Բր. Լռեմք...

Կաս. Ո՛հ, Բրուտէ, դու ես աստուած Հռովմայ։

Կիմբ. Եւ զհրոխտս զայս զանօրէն գերի պարտ է կորուսանել։

Բր. Զէ ինչ արժանի այրն և ոչ բարկութեան մերում։ Մատեայց ես դարձեալ 'ի փորձ յետին, ապա այնուհետև միտ դիք իմոյ ակնարկութեանս։

Կաս. Երթիցուք ապա մեք ժողովել զմերսն։

Բր. Արիք վաղվաղակի. (Ելանեն երեքին)։

ՏԵՍԱՐԱՆ Զ

ԲՐՈՒՏՈՍ միայն

Բր. Այս իսկ է տեղին՝ ուր յետ սակաւ միոյ մնայ ինձ խօսել ընդ Կեսարու. ապա դարձեալ 'ի տաճարին խորհրդոց՝ ուր օրհաս մահուն դարանակալ է նմա... Խնայեա, երկին, խնայեա յիս, և զերծո յարհաւրաց սաստի. կախեսցին յօդս 'ի քումդ հրամանէ սուսերք Թերաքամեալք յիջանել իւրեանց 'ի վերայ նորա. տուք նմա սիրել զՀռովմ և լինել նորա քաղաքացի, զի լիցի նա և հայր Բրուտոսի։ Ահաւասիկ նա ինքն. յապուշ հարեալ կամ և այլ յայլմէ լինիմ։ Ո՛ Կատոն, Կատոն, հաս փութա առ իս, հաս ինձ 'ի Թիկունս։

ՏԵՍԱՐԱՆ Է

ԿԵՍԱՐ, ԲՐՈՒՏՈՍ

Կես. Յինէն զի՞ խնդրես, զի՞նչ կամիս. իցէ՞ քո արդեօք սիրտ մարդկեղէն. իցե՞ս դու իմ որդի։

Բր. Եւ կարի իսկ քաջ, եթէ և դու Հռովմայ։

Կես. Ա՜յ պարանոց խիստ. զի՞նչ իցեն բարբանջանքդ. պատահեցար ինձ անողորմ նախատել զիս և ես. իսկ եթէ մեծամեծ բարերարութեանցս շնորհ՝ որ 'ի քեզ հոսէ անդուլութեամբ, և ինկելի պաշտօն աշխարհի՝ որ քեզ հանդերձեցաւ առ 'ի յինէն, իմ քաղցրութիւն և սէր և արքայութիւն ոչ ինչ զօրեսցին հրահանգել զքեզ, որով ակամբ հայիցիս դու ապա 'ի գահ անդր։

Բր. Ահիւ և դողութեամբ։

Կես. Ցաւ է ինձ 'ի վերայ քո, Բրուտէ. ողորմիմ ողորմիմ անմիտ մտածութեանդ, նա մանաւանդ և ներեմք քեզ. այլ զիա՞րդ է քեզ ատել զիս, որդեակ։

Բր. Ա՜հ, ո՛չ, ո՛չ. խաբիս, Կեսար. ես սիրեմ զքեզ. քո քաջութիւն և առաքինի հանդէսք մինչև ինչ ծանուցեալ էր իմ զիմ արիւն՝ ձգեցին զիս առ իւրեանս, և բողք բարձեալ գանգատ կալոյ զերկնից, եթէ զիա՞րդ դիւցազն ոք իբրու զքեզ՝ միանգամայն կործանումն իցէ և պարծանք Հռովմայ. խորշիմ ես յարքայացեալն Կեսարէ. իսկ Կեսար հռովմայեցի՝ Բրուտոսի աստուած եղիցի. և հանից նմա պատարագ զիմ բաղդ և զկեանս ևս ձօն յաւէրժական։

Կես. Սակայն բե՛ւ իւիք զգածեալ է սիրտ քո առ իս։

Բր. Բիւրաւոր կրիւք, բաց 'ի նախանձուէ։

Կես. Իսկ զի՞նչ իցէ՝ զոր ատեաս դու յիս։

Բր. Բռնաւորութիւն. աղէ դու միանգամ, Կեսար, աղաչեմ զքեզ՝ անսա ինձ. լուր բանից պաղատանացս, (ծունր դնէ). և խորհրդոյ ամենայն Հռովմայեցւոցս և համօրէն աւագանւոյն, և որդւոյ քո իսկ գլխովին։ Խնդրես դու Թերևս առաջին ունել գահ 'ի մէջ մահացուաց, և քան զչքնաղ մարտի վայելել կեանս քաջնափայլս և անդորրաւէտս, և լինել վեհ քան զԹագաւոր և Կեսա՛ր ինքնին։...

Կես. Եւ զի՞նչ ապա. (յարուցանէ զնա)։

Բր. Տես զչորեսին ծագս տիեզերաց 'ի կառս քո լծեալս, արձակեա արդ զոնեայ ուրեմն 'ի կապանաց սաստի զմեր հայրենիս. բեր յանձին հոգի հռովմայեցի, 'ի բաց կաց յարքայութենէդ։

Կես. Ա՜հ, զի՞նչ պահանջեցեր։

Բր. Զայն ինչ զոր արար Սիլլա. Սիլլա գայլ գիշախանձ յարեան մերում շաղախեցաւ բազում ժամանակ. այլ հուսկ յետոյ ազատութիւն շնորհեալ Հռովմայ, մոռացաք զամենայն։

Այն մարդախոշոշ բռնաւոր՝ զորով շուրջ տապաստ գնէին բազում վիրաւորք, իջեալ 'ի գահէ անտի ջնջեաց սրբեաց 'ի մտաց ամենեցուն զյանցանս իւր և 'ի մոռացօնս դարձոյց. Կեսար ոչ սիրեաց նմանել նորա չարութեանն. Թող ապա նախանձ բերցէ առաքինութեան նորա: Բազումս բազմաց պարգևեցեր շնորհս բարեաց. քաջ է. այլ առ ինչ իցեն այդ շնորհք. Հռովմայ և հայրենեացդ պարտ է քեզ շնորհել. յայնժամ ապա և մեր սիրտք քեզ լիցին ծառայք. յայնժամ Թագաւորեսցես. յայնժամ և ես՝ քո եղէց որդի...: Այլ զի՞նչ, եթէ 'ի զո՞ւր ինչ իցեն բանք իմ...

Կես. Հռովմայ Թագաւոր պիտոյ է. ծանիցես և դու յաւուր միում, այլ քեզ 'ի կորուստ: Եթէ ո՞չ տեսանես զմեր քաղաքացիս բռնացեալս առաւել քան զԹագաւոր. 'ի փոխել բնութեան, Բրուտէ, և օրինացն փոփոխումն լինի. զգեղեցիկ ազատութիւն յաւուրս մեր գործի առին բազումք 'ի հարստահարել զմիմեանս. Հռովմ երբեմն քակէր զամենայն, իսկ արդ անձամբ զանձն տապալէ. այլ նեցուկ նորա այս բազուկ. յետ ժամանակացն Սիւղլայի ամենայն առաքինութիւն Հռովմայ և ծերակոյտն և օրէնք և հասարակապետութիւն, և ինքն իսկ Հռովմ էանց իբրև զստուեր իբրև զերազ զարթուցելոյ, անգոյ անուն անուանք միայն են և ոչ ճշմարտութիւն. և զարդիս առ մեզ ուր ամենայն ինչ արիւն և հուր և մրրիկ չիք է յապականեալս դարու, այնպէս խօսիս, որպէս եթէ 'ի ժամանական անդ իցես Դեկոսի և Եմիլիոսի: Ա՛հ, որդեակ իմ սիրելի, Կատոնն խաբեաց զքեզ, նա զքեզ մոլորեցոյց՝ գիտեմ ես. և 'ի բացուստ նշմարեմ եթէ այդ քո մահագուշակ կարծեցեալ առաքինութիւն՝ ածցէ քեզ կորուստ և մերոց հայրենեաց. այլ աղէ դու անսա նմա՝ որ յաղթեաց Կատոնի և Պոմպէի. ինձ հօր քում անսա, որ զքեզ սիրեմ և ողորմիմ մոլորելոյդ. լեր իմ որդի հարազատ, Բրուտէ, տուր ինձ այսր զսիրտ քո. ուխտեմ և ես քեզ զիմ սիրտ. փոխեաց 'ի կամակոր խորհրդոց այտի. մի 'ի զուր ինչ մրցիր ընդդէմ բնութեան: Բա՛րէ, լռեալ կաս. չտաս ինչ պատասխանի, և 'ի բաց դառնաս:

Բր. Ա՛հ. յայլ խելս կամ, և միտք իմ ցնորին. երկին, առաքեա արդ, առաքեա զփայլատակունս, և շանթահար բարձ զթշուառացեալս 'ի միջոյ. զի՞նչ գործեցից. ա՛հ Կեսար...

Կես. Տեսանեմ արդ զի լուծաւ մորմոքեցաւ սիրտ քո. ա՛հ որդեակ իմ...

Բր. Ա՛հ, Կեսար, գիտիցես արդեօք զի 'ի մեծի վտանգի են կեանք քո. գիտիցես զի չիք ոք 'ի ծերակուտէն Հռովմայեցի, որ ոչ արեան քում ծարաւեսցի. արդ աղէ քոյին փրկութիւն շարժեսցէ թէ ոչ Հռովմայն: Ես գիտեմ զի ոմն յաստուածոց քոյին խնամակալ բարբառի առ քեզ յիմ բերան. նա զիս խուճապէ, նա զիս աստ յոտս քո խոնարհէ. (դնէ ծունր դալճեալ). հա՛պա, Կեսար, երդմնեցուցեալ զքեզ յահաւոր անուն աստուածոց՝ որ ցարդ մոռացօնք էին սրտի քո, 'ի քո մեծ քաջութիւնդ, 'ի Հռովմ և 'ի քեզ իսկ գլխովին, այլ և զայն ասացից եթէ և յորդիդ քո սիրելի, որ զքեզ աղաչէ հեծէ պաղատի, և զքեզ միայն առաջին դասէ համօրէն աշխարհի, և քեզ միայն զՀռովմ, մի մերժեր զիս, անսա բանից պաղատանացս:

Կես. Ի բաց կաց, անարժան դու, զի՞ խնդրես յինէն:

Բր. Զի խրատուս ունկն մատուցես, և մի 'ի սպառ յամառեալ խստասցիս:

Կես. Սահմանք տիեզերաց սասանեսցին, Կեսար ոչ բնաւ:

Բր. Ա՛յս ուրեմն է կնիք բանիցդ:

Կես. Այս է. Հռովմայ պարտ է ծառայել. Կեսար զայն խնդրէ:

Բր. (Ցաւագնեալ) Մնա խաղաղութեամբ, Կեսար. (կամի գնալ):

Կես. (Ունի զնա) Զի՞ գործես. կաց մնա առ իս, կաց առ իս, որդեակ իմ. զի՞նչ իցեն այդ քո արտասուք. լա՞ս դու, Բրուտէ, զի լինի քեզ Թագաւոր. աշխարես զՀռովմ...

Բր. Զքեզ միայն, զքեզ աշխարեմ. Թո՛յլ տուր ինձ. մնա խաղաղութեամբ. (Ելանէ):

ՏԵՍԱՐԱՆ Ը

ԿԵՍԱՐ, ապա ՏՈՒԼԱԳԻԼԼԱ

Կես. Բա՛րէ անդրդուելի արութեանն. բա՛րէ անընդոստ մտացն, բա՛րէ զիւցազուն հոգւոյն. աւա՜ղ ինձ. իսկ ընդէ՞ր բնաւ ոչ գիտեմ և ես սիրել այսպէս զիմ հայրենիս:

Տուլ. Տէր արքայ, ծերակոյտն և ամենայն աւագանին ժողովեալ 'ի տաճար անդր ըստ քում հրամանի, և գահոյս արկեալ սպասեն քոյին գալստեան. լեգէոն Հռովմայեցւոց և քաղաքն ողջոյն դղրդեալ շարժեցաւ, և առ դրանն ծովացեալ տատանին 'ի ծուփ տարակուսի: Որոց զոգիս վասն քո եդեալ է 'ի ձեռին, 'ի պատրաստի են երկրպագել քումդ պսակի: Սակայն եթէ հաճեսցի արքայ հաւատալ իւրում մտերիմ զօրականին և բոթալից գուշակութեանցն և աստուածոց երկնից, յապաղեսցէ առ ժամս զգործս, յայլում պահեալ բարեպատեհ ժամու:

Կես. Զի՞նչ. ուր զԹագաւորութենէ են բանք՝ վայրկեան մի յապաղել. և ո՞ իցէ ինձ խոչընդոտ:

Տուլ. Նա ինքն բնութիւնն բազում գուշակութեամբ զքեզ խրատէ, և երկինք արքայից արքայ զմահ քո գուժէ:

Կես. Ի բաց գնա. մարդ է և Կեսար. անմտութիւն մեծ է կարծել եթէ երկինք այնչափ տարփացեան Կեսարու, մինչև միտս ընծայել վասն իմ անշունչ բնութեան. կամ թէ հիմունք տիեզերաց շարժեսցին, և 'ի կայից իւրեանց աստեղք 'ի բաց ոստիցեն, զի մարդ ոք մահացու օր մի և եթ առաւել ապրեսցի: Աստուածք զաւուրս մեր թուեցին 'ի բարձանց, ելցուք սիրով ընդ առաջ բաղդին. Կեսար ոչ ինչ զանգիտէ:

Տուլ. Թշնամիք բազում են Կեսարու, որ ոչ հանդարտեն այս նորոյ լծոյս. ո՞ գիտէ, եթէ և դաւ ինչ վրիժուց խորհեցան վասն քո:

Կես. Զայդ ոչ երբեք իշխեսցեն:

Տուլ. Զարաչար յուսացար:

Կես. Այդ չափ երկիւղ մահու՝ յամօթ առնէ զիս աշխարհի:

Տուլ. Սակայն վասն հասարակաց օգտի արժան է քեզ յաւէրժանալ 'ի կեանս յայս. գոնեա

ուրեմն թոյլ տուր և ինձ գալ ընդ քեզ յատեան անգը :

Կես. Ոչ. փոխել զհրամանս իմ ոչ առնում յանձն. փոփոխումն խորհրդոց վատութեան է նշանակ :

Տոլ. Բարւոք է. թողից զքեզ որպէսախորժես. սակայն բազում երկիւղիւ :

Կես. Լաւ է ինձ մեռանել, քան 'ի մահուանէ զանգիտել. հապա երթիցուք :

Կը շարունակուի :

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես երես 158)

460 Ինչու համար առաստաղին ամեն կողմերն ալ հաւասարապէս սև չեն ըլլար : — Որովհետև առաստաղին ծեփն տեղ տեղ դուրս ցցուած և անհարթ կէտեր ունի. օդուն ընթացքն ասոնց վրայ փոշւոյ և ծանծախարիթի աւելի մեծ քանակութիւն մը կը բերէ :

461 Ծուխն կը վնասէ բուսեղինաց : — Այո. սաստիկ ծուխի քանակութիւն մը՝ բոյսերուն տերևները կը թափէ և զանոնք կը մեռցընէ. բայց պզտի քանակութիւնն չիվնասեր, մանաւանդ թէ՝ եթէ ըստ պատշաճի գործածուի՝ մեծ օգուտ ալ կ'ընէ :

462 Այս ծուխին գործածութիւնն ինչպէս օգտակար կրնայ ըլլալ բուսեղինաց : — Որովհետև քանի մը բոյսեր և մանաւորապէս որթերը կը պաշտպանէ սառելէն՝ որ կրնայ պատահիլ անոնց ծաղկելուն ժամանակ :

463 Ի՞նչ կերպով ծուխն կը պահէ որթերը գարնան սառերէն : — Երկու կերպով. Նախ՝ իրեն հետ բերած ջերմութեամբը սառին հալումը կը հուտցընէ որթի ուռերուն մէջ, և կը դիւրացընէ բուսեղէն հիւթին դարձուածքը : — Բ. Կը խափանէ արևուն ճառագայթները, որոնք ուղղակի կը հասնին ջրոյ և սառի կայլակներուն վրայ, և ասոնք ալ ոսպնաձև ապակիի մը զօրութիւն առնելնուն համար՝ կրնայ այրել կեղևը և բոյսին վնասել :

464 Ի՞նչ բան է ճրագի մը կամ կանթեղի մը ծուխը : — Բաղադրութիւն մ'է տեսանելի շոգիներու, որք առաջ կու գան կազային գոյութիւններէ և ամենապզտի ածղուկի կտորներէ՝ որք բոցէն չեն սպառուած :

465 Ինչու համար ճրագ մը, երբոր ծայրը չյարդարուի, ծուխ կու տայ : — Նախ որ՝ պատրուգին երկայնութիւնն աւելի ածղուկ կը մատակարարէ բոցին՝ քան որչափ որ ասիկայ կրնար սպառել : — Բ. Կը նուազցընէ բոցին տաքութիւնը, որով չի կրնար սպառել և ոչ իսկ ծուխին սովորական քանակութիւնը :

466 Բայց ինչու համար նաև մեղրամոմէ ճրագք՝ որ յարդարման պէտք չունին՝ երբեմն ծուխ կ'արձըկեն : — Մեղրամոմէ ճրագներն այն ատեն ծուխ կու տան, երբ ծայրին արտաքին շրջապատն շատ բարձրացած ըլլայ, կամ ինչպէս սովորաբար կ'ըսուի՝ երբ ճրագն սկուտեղ մը կը ձևացընէ, այն ատեն անոր եզերքն կ'արգելուն օդն պատրուգին վրայ հասնելու, ասով շատ ածղուկ կը մնայ առանց սպառելու :

467 Ինչու համար ձէթով կանթեղներն երբեմն խիտ ծուխ մը կ'արձըկեն : — Կամ անոր համար որ պատրոյգն հաւասար կտրուած չէ, և կամ որ շատ բարձր է :

468 Ինչու համար անհաւասար կըտրուած պատրուգով կանթեղ մը ծուխ կը ձգէ : — Նախ որ, պատրուգին ծայրի կէտերն կամ ակռաներն անկէ դիւրաւ կը զատուին, և բոցին շատ ածղուկ կը բերեն, այնպէս որ չիկրնար բոլորն ալ սպառել : — Բ. Բոցին տաքութիւնն շատ կը նուազի այս պատրուգի կտորներով, և չիկրնար ամբողջապէս այրել առաջ բերած ածղուկը :

469 Ինչու համար եթէ կանթեղի մը պատրոյգն շատ բարձր ըլլայ, ծուխ կը պատճառէ : — Որովհետև շատ երկայն պատրոյգն զբոցը կը պաղեցընէ, և ասիկայ ույժ չունենար առաջ եկած ածղուկը սպառելու :

470 Ինչու համար շատ երկայն պատրոյգներն զբոցը կը պաղեցընեն : — Պատրոյգն այն կէտն է՝ յորում կ'ըլլայ բաղալուծումն կամ քայքայումն ձիթոյ և իրեն հետ միացեալ գոյութեանց. բայց որպէս զի այն լուծմունքն ըլլայ՝ շատ սաստիկ տաքութեան աստիճան մը պէտք է, և այս տաքութիւնը որչափ աւելի ունենայ պատրոյգն, այնչափ կը նուազեցընէ զբոցը. ուրեմն որչափ որ պատրոյգն երկայն ըլլայ, այնչափ ալ աւելի կը պաղի բոցն :

471 Ինչու համար արկանտ (d'Argand) ըսուած ճրագներն ծուխ չեն ձգեր : — Որովհետև այս կանթեղներուն բոցին բոլոր երկայնքէն հովու ընթացք մը կ'անցնի. հետևաբար բոլոր ածղուկն կը զուգադրի այն թթուածնին հետ՝ որ իրեն կու գայ առատապէս, և ասկէ կը հետևի կատարեալ կիզում մը :

472 Ի՞նչ բանի համար կանթեղներուն վրայ ապակիէ խողովակներ կը դնեն : — Որպէս զի ծուխ չընեն :